

Անձնական տվյալների պաշտպանությունը Հայաստանում

Գեորգ Հայրապետյան – ՀՀ ԱՆ անձնական տվյալների
պաշտպանության գործակալության պետ

ԱՏՊ օրենսդրությունը

Անձնական տվյալների պաշտպանության
մասին նոր օրենքն ուժի մեջ է մտել 2015
թվականի հուլիսի 1-ից:

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը

ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ՀՀ կառավարության՝ 2015թ.-ի հուլիսի 2-ի 734-Ն որոշմամբ ճանաչվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմին:

Անձնական տվյալները

Անձնական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը

Անձնական կյանքի տվյալ՝ անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ

Անձնական տվյալները

Կենսաչափական անձնական տվյալ՝ անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ

Չատուկ կատեգորիայի անձնական տվյալ՝ անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ

Անձնական տվյալները

Հանրամատչելի անձնական տվյալներ՝ տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ

Անձնական տվյալների մշակման սկզբունքները

- Օրինականության սկզբունք
- Համաչափության սկզբունք
- Հավաստիության սկզբունք
- Սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունք

Օրինականության սկզբունքը

1. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ:

2. Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

ՉամաչափուԹյան սկզբունքը

1. Տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:
2. Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար:
3. Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ:
4. Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:
5. Անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար:

ՋավաստիուԹյան սկզբուԼները

1. Մշակվող անձնական տվյալը պետք է լինի ամբողջական, ճշգրիտ, պարզ և հնարավորինս թարմացված

Սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքը

1. Անձնական տվյալների մշակումն իրականացվում է սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքով:

2. Այն դեպքում, երբ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, նոտարը միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով կարող են անձնական տվյալը ձեռք բերել այլ մարմնից, ապա անձնական տվյալների սուբյեկտից չի պահանջվում ներկայացնել որոշակի գործողությունների համար անհրաժեշտ անձնական տվյալը:

3. Անձնական տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության դեպքում անձնական տվյալներ մշակող համարվող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարող են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ որոշակի գործողության համար անհրաժեշտ և անձնական տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության մեջ ուղղակիորեն մատնանշված անձնական տվյալը:

4. Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Անձնական տվյալներն օրինական մշակելու հիմքերը

- Օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը
- Համաձայնությունը
- Հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը

Համաձայնության չափանիշները

1. «ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը»
2. «ազատ տրված»
3. «որոշակի»
4. «տեղեկացված»

Համաձայնության կիրառումը պետական մարմինների կողմից

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անձնական տվյալի մշակման հիմքերից որեւէ մեկն ընտրելու հայեցողությունը պետք է մեկնաբանել հնարավորինս նեղ. այն պարագայում, երբ անհրաժեշտ է, որ պետական մարմինն օգտվի անձնական տվյալի մշակման համաձայնության կամ հանրամատչելի աղբյուրից ձեռք բերված լինելու հիմքերից, անհրաժեշտ է, որ այդ հնարավորությունը (հայեցողությունը) նույնպես արտացոլված լինի օրենքով (թիվ N-017/09/17 վարչական գործ):

Միջազգային ընդունված կանոններ

«Չանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ» ԵԽ նախարարների կոմիտեի R (2003) 13 Չանձնարարական

«Ոստիկանության ոլորտում անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ» Եվրոպայի Խորհրդի գործնական ուղեցույց

Վարչական պրակտիկա

- Գործ թիվ N-001/03/16 – Human Rights Watch-ն ընդդեմ ՀՀ ոստիկանության եւ ՀՀ առողջապահության նախարարության
- Գործեր թիվ N-017/19/17 եւ N-004/04/18– Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ն ընդդեմ ՀՀ ոստիկանության եւ ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանություն ծառայության
- Գործ թիվ N-006/01/19 - Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի

Օրինակներ պրակտիկայից

- Պատմությունը երկու տղայի մասին
- Պատմությունը դատապարտված մի աղջկա մասին

Անձնական տվյալների պաշտպանությունը

Հարցե՞ր...

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, 2020